

## ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՈՒՄ

Լիբանանի էլեկտրականության հաստատության պաշտոնյաները սենտիքան յայտարարեց, թե այսօր սկսած եռօրյա գործադուլ՝ հաստատության տնօրենությունն ու կառավարությունը ամբաստանելով իրենց պահանջները անտեսելու մեջ: Պաշտոնյաները նշեցին, թե այս երեք օրերու ընթացքին փակ պիտի մնան հաստատության գրասենյակները:

### ՊԵՐՐԻ.

## ԼԻԲԱՆԱՆ ՍՆԱՆԿԱՑԱԾ ԶԷ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի շեշտեց, թե Լիբանան սնանկացած պետություն չէ, այլ պարզապես կ'ու-



շանայ վերադարձնել պարտքերն ու աւանդները: «Աւանդները սուրբ են, ուստի պետք է զանոնք ուշ թե կանուխ վերադարձնել աւանդատերներուն», յայտարարեց Պըրրի՝ Պէյրուսի եւ հիւսիսի ճարտարապետներու սենտիքայի պատուիրակությունը ընդունած ատեն: Խորհրդարանի նախագահը որոշեց յառաջիկայ Չորեքշաբթի՝ 15 Մայիսին գումարել խորհրդարանական կիստ մը՝ քննարկելու համար սուրիացի տեղահանուածներու հարցով Եւրոպական մէկ միլիարդ տոլար նպաստին գծով լիբանանեան կեցուածքը:

### ԱՆՕՐԱԶՈՒՆԵՐՈՎ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Յրգայլաւ երէկ յայտարարեց, որ թռչող պայթուցիկ սարքերով յարձակում գործած է իսրայէլեան «Եուֆթահ»



գործամասի շրջափակին մէջ հաւաքուած զինուորներու վրայ՝ պատճառելով մարդկային եր նիւթական ծանր կորուստ: Միաժամանակ, թռչող այլ սարքերով թիրախաւորուած է իսրայէլեան հակաօդային պաշտպանութեան կայան մը՝ խափանելով անոր աշխատանքը: Իսրայէլեան բանակը իր կարգին խոստովանեցաւ, որ Յրգայլայի յարձակումին պատճառով մահացած է երկու սպայ:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

### ՓԱՇԻՆԵԱՆ.

## «ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ ԿԱՍ ՊԱՏԵՐԱԶՍ»

Հայաստանի մէջ ամէնօրեայ դրութեամբ կը սրի քաղաքական լարուածութիւնը վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած իշխանութեան եւ Տաւուշ գաւառի առաջնորդ Բագրատ արք. Գալստեանեանի ղեկավարած «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումին միջեւ, մասնակցութեամբ քաղաքական եւ ժողովրդային բոլոր ուժերուն եւ խաւերուն՝ Առաջնորդը իր հետեւորդներուն ընկերակցութեամբ կը շարունակէ երթը՝ վաղը Երեւան հասնելու մտադրու-



թեամբ: Այսօր կէսօրին, ընդհիմադիրներու խումբը հերթական երթը կը սկսի Չարենցաւանէն, Արովեան քաղաք հասնելու մտադրութեամբ: Բողոքող սրբազանին եւ անոր կողքին քաղաքացիներուն պահանջն է «անկապաղ դադրեցնել սահմանազատումի եւ սահմանազծումի հողվոյթն ու միակողմանի զիջումները Ատրպէյճանին»:



Կիրակցի վարչական շրջանի ղեկավար Կարո Շահինեան երէկ յայտարարեց, թե սահմանային աշխատանքները այժմ դադրած են, սահմանային ութ սիւն տեղադրուած է, իսկ Կիրակցի բնակելի հատուածին մէջ մնացեալ երեք սիւներու տեղադրումը առկախուած է, առանց պատճառներու բացայայտումի:

Բագրատ Սրբազանին առաջնորդած շարժումին զուգահեռ, վարչապետ Նիկոլ Փաշինեան երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին ահազանգեց, որ «Եթէ սահ-

մանազատումը չշարունակուի, պատերազմ տեղի պիտի ունենայ»: Պատասխանելով հողվոյթը դադրեցնել պահանջող կողերուն, ան ըսաւ. «Կ'առաջարկեմ դադրեցնել Հայաստանի անվտանգութեան երաշխիքներու ձեւաւորումը, ինքնիշխանութեան հաստատումը: Սահմանազատումը դադրեցնելու հետեւանքը պարզ պիտի ըլլայ՝ պատերազմ պիտի սկսի»: Ըստ վարչապետին, սահմանազատումը Կիրակց վարչական շրջանին համար շատ մեծ լաւ տրուութիւն պիտի բերէ եւ այդ շրջանէն սկսած է պատերազմը բացառելու եւ որեւէ հիմք գրկելու համար: «Կ'ըսեմ, թե սահմանային Ռսկեպարի եկեղեցին կը յանձնենք, թե սահմանը եկեղեցու մուտքէն մէկ մետր անդին է: Հիմա սահմանազատումը կ'ամբողջանայ եւ դուք բոլորը կ'այցե-



լեք, Ռսկեպարի եկեղեցույ մէջ կ'աղօթեք ու կը տեսնեք, թե այս հողվոյթը ինչ տուաւ եւ ինչ չտուաւ այդ շրջանին», ըսաւ Փաշինեան: Խօսելով Կիրակցի սահմանազծումին մասին, վարչապետը բացատրեց, թե 12 կետերէն 8-ն արդէն յստակացուած է, իսկ երեք կետ խիստ զգայուն է, այնտեղ սանթիմերով է հաշիւը եւ աշխատանքը կը կարօտի յանելեալ ժամանակի: Խօսելով իր գլխաւորած Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան մէջ պտուակտումներու առկայութեան մասին, Փաշինեան վստահեցուց, թե իր քաղաքական խումբը կը մնայ ամուր: «Համաձայն եմ մինչեւ Նոյեմբեր խաղաղութեան պայմանագիր կնքելու

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

## ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԲՆՆԱԿՐԿՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան այսօր Մոսկուայի մէջ պիտի տեսակցի Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ եւ նախագահէ Եւրասիական տնտեսական միութեան խորհուրդի նիստը: Վարչապետը դիտել տուաւ, թե հայ-ռուսական յարաբերութիւններուն մէջ կուտակուած են բազմաթիւ խնդիրներ, որոնք պիտի քննարկուին Փութինի հետ տեսակցութեան ընթացքին: Փաշինեան երէկ տուած մամուլի ասուլիսին ընթացքին խօսեցաւ նաեւ



հայ-ռուսական յարաբերութիւններուն մասին: Պատասխանելով այն հարցումին, թե ինչու ներկայ էր Թուրքիոյ նախագահի երդմանակալութեան, սակայն ոչ Փութինի, Փաշինեան բացատրեց, որ Անգարայէն հրաւեր ստացած էր մասնակցելու այդ արարողութեան, իսկ Մոսկուայէն՝ ոչ: «Զեմ կարծեք, թե ամէն տարի պետք է մասնակցիլ 9 Մայիսի հանդիսութեան», ըսաւ վարչապետը՝ անդրադառնալով Մոսկուայի մէջ կայացող ամենամեայ տոնակատարութեան, որուն ներկայ կ'ըլլան բազմաթիւ երկիրներու ղեկավարներ: Խօսելով Հայաստանի մէջ ռուսական հեռաւեհիկ կայաններու սփռումի հարցին մասին, վարչապետը նշեց, թե նկատի առնելով հայ-ռուսական բարեկամական յարաբերութիւնները, Երեւան իր պահանջները խնդրանքի ձեւով 7 անգամ ներկայացուցած է ռուսական լրատւամիջոցներուն, սակայն առանց արձագանգի, որմէ ետք հինգ անգամ ալ ներկայացուցած է պահանջի ձեւով, եւ սպարդիւն: «Մենք պատրաստ ենք եւս երկու անգամ պահանջել վերաբերմունքի փոփոխութիւն, իսկ ետքը եկէք արձանագրենք, թե ինչ պիտի ըլլայ մեր յաջորդ քայլը», ըսաւ Փաշինեան, նշում կատարելով ռուսական պետական կայաններու սփռումը արգիլելու հաւանականութեան: Նշեց, թե հարցը կը վերաբերի ռուսական նշեալ կայաններէն վարչապետ Փաշինեանի ու Հայաստանի կառավարութեան նկատմամբ շարունակաբար ինչո՞ք քննադատութիւններուն եւ ձեխարձակումներուն:

## ՌԱՖՅԱԿԸ ԶԻՆԱԳԴԱԳԱՐԷՆ ԱՌԱՋ

Անցնող քանի մը օրերուն շատ քննարկուած Կազայի զինադադարը մինչեւ երէկ զիշեր տակաւին չէր իրականացած, հակառակ արտաքին միջնորդական ջանքերուն, մինչ Իսրայէլ կը սաստկացնէր գործողութիւնները Կա-



զայի հարաւային Ռաֆահ քաղաքին ուղղութեամբ, զայն դասելով «սահմանափակ գործողութեան» ծիրին մէջ: Իսրայէլեան բանակը երէկ յայտարարեց, թե ամբողջութեամբ տիրապետած է Եգիպտոսի հետ սահմանային Ռաֆահ անցակէտին եւ կը հետապնդէ պաղեստինցի զինեալները: Պաշտպանութեան նախարար Եոազ Կալանթ ջթաք-



ցուց իսրայէլեան ծրագիրները, այլ զգուշացուց, որ Ռաֆահի գործողութիւնը պիտի շարունակուի. «մինչեւ շրջանի մէջ Համասի ուժերուն կործանումը կամ գերեզմարուած իսրայէլացիներէն մէկուն ազատ արձակումը»: Իսկ Հա-

մասի բանքեր Ապու Օպէյտա յայտարարեց, թե մահացած է իսրայէլցի տարեց գերի ճուտի Ֆելշթայն, որ ամիս մը առաջ ծանրօրէն վիրաւորուած էր Կազայի դէմ իսրայէլ-



եան ուժակոծութեան պատճառով ու կարելի չէր եղած տրամադրել բժշկական օգնութիւն՝ պաշարումին հետեւանքով:

Որպէս հակադարձութիւն Ռաֆահի գարգացումներուն, պաղեստինցիները Կազայի մերձակայ բնակավայրերուն ուղղութեամբ արձակեցին 30 հրթիռ, պատճառելով հրդեհներ եւ նիւթական վնաս: Համաս շարժումը ամերիկեան վարչակազմին եւ միջազգային ընտանիքին կոչ ուղղեց ճնշում բանեցնել Իսրայէլի վրայ՝ վերջ տալու համար հարիւր հազարաւոր քաղաքացիներու կեանքը վտանգող յարձակումներուն: «Ռաֆահի սահմանակէտին ներխուժումը ոճիր մըն է, որ կը բացայայտէ միջնորդներուն ջանքերը խափանելու իսրայէլեան մտադրութիւնը՝ յանուն Նեթանիահուի կառավարութեան հատուածական շահերուն», յայտարարեց Համաս:

Եգիպտոսի իշխանութիւնները դատապարտեցին Ռաֆահի գործողութիւնները, ահազանգելով, թե իսրայէլեան յարձակումը կը խափանէ զինադադարի հասնելու ջանքերը: Իսկ Լիբանանի արտաքին գործերու նախարարութիւնը զգուշացուց Ռաֆահի ուղղութեամբ լայնածաւալ գործողութեան մը վտանգաւոր հետեւանքներէն: Նախարարութիւնը ահազանգեց, թե Կազայի այլ շրջաններէ Ռաֆահ

(Շար.ը տեսնել 4րդ էջ)



## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆՅ ԵՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ

Յերուշաբթի, 6 Մայիս 2024-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը իր գրասենյակին մեջ ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցության Լիբանանի Վարիչ Մարմինի ատենապետ Վանիկ Տազետեանը, Յայ



Յեղափոխական Դաշնակցության Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունին և Ռամկավար Ազատական Կուսակցության Լիբանանի Շրջանային վարչության ատենապետ տոքթ. Անտիա Տազետեանը:

Վեհափառ Յայրապետը ողջունեց միջկուսակցական գործակցությունը և կարելիություններ շեշտեց զայն անելի ծառայելու հրամայականը: Ներկաները, իրենց կարգին, դարձեալ յանձնառու եղան գործակցական ոգիով շարունակելու իրենց հաւաքական քննարկումները ընդհանրապէս Յայաստանն ու հայ ժողովուրդը և մասնաւորաբար Լիբանանի հայութիւնը յուզող հարցերուն շուրջ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԵՐԱՑՈՒՅ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Յիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը իր 51-րդ նիստին ընթացքին Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանը ընտրեց որպէս թեմա-



կալ առաջնորդ: Այս առիթով, Ժողովի դիւանը պաշտօնական նամակով մը ընտրութեան արդիւնքները փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին և խնդրեց անոր վաւերացումը: Նորին Սրբութիւնը Յայրապետական պաշտօնագրով մը իր օրհնութիւնը տուաւ Ժողովական անդամներուն և վաւերացուց Սրբազանին ընտրութիւնը:

Գեղամ սրբազան նախապէս առաջնորդն էր Յունաստանի հայոց թեմին, որմէ առաջ որպէս առաջնորդ ծառայած էր Լիբանանի թեմին: Սրբազանը տարբեր պարտականութիւններ և պաշտօններ ստանձնած է, ինչպէս՝ Դարեվանքի հսկիչ, մատակարարապետ, ազգային վարժաններու մէջ կրօնի և հայագիտութեան ուսուցիչ: Գեղամ սրբազան 2017 թուականին ստացած է իրաւաբանական ճիւղի մագիստրոսի աստիճան, Զատիքի «Ս. Գրգի» համալսարանէն: Ունի հայերէն և արաբերէն հրատարակութիւններ:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՄԿՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԼ 2027 ԹՈՒՎԿԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ




Յայաստանի Յանրապետութիւնը արդէն սկսած է նախապատրաստուել 2027 թուականին Երեւանի մէջ կայանալիք Ծանրամարտի աշխարհի պիտոյեանութեան:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

## «ԿԳՄՄ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Ե «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԷՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Յայաստանի Յանրապետութեան կրթութեան, գիտութեան, մշակոյթի և մարմնամարզի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանը հանդիպած է Վենետիկի յանձնաժողովի և Եւրոպայի խորհուրդի մարդու իրաւունքներու և իրաւունքի գերակայութեան գլխաւոր տնօրինութեան պատուիրակութեան հետ, որ գլխաւորած է Վենետիկի յանձնաժողովի անդամ Վերոնիքա Պիլքովան (Չեխիա):

Հանդիպման առանցքին «Ազգային փոքրամասնութիւններու մասին» օրենքի նախագիծին վերաբերեալ քննարկումն էր:



ԿԳՄՄ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանը ողջունած է պատուիրակութեան անդամները և նշած, որ Յայաստանի կառավարութիւնը կը կարելիորէ միջազգային կառուցելու հետ համագործակցութիւնը: «Յայաստանի Յանրապետութիւնը խստօրէն կը հետեւի միջազգային բոլոր օրէնքներուն, այդ շարքին՝ ազգային փոքրամասնութիւններու կրթութեան և մշակութային կեանքին վերաբերող իրաւունքներուն»:

Կողմերը անդրադարձած են «Ազգային փոքրամասնութիւններու մասին» օրենքի նախագիծի մշակման գործընթացին և անոր մէջ ԿԳՄՄ նախարարութեան մասնակցութեան ու ներկայացուցած առաջարկներուն: Վենետիկի յանձնաժողովի պատուիրակութեան տեղեկացուած է, որ ԿԳՄՄ նախարարութիւնը մասնակցած է օրենքի նախագիծին՝ ազգային փոքրամասնութիւններու կրթութեան իրաւունքին նուիրուած յօդուածի մշակման: Արթուր Մարտիրոսեանի դիտարկմամբ՝ յօդուածը թէւեւ ծաւալուն չէ, բայց առանցքային նշանակութիւն ունի ամբողջ օրենքի ծիրին մէջ:

Փոխնախարարը ներկայացուցած է լրացուցիչ տեղեկութիւնները՝ յօդուածի առանձին կէտերու վերաբերեալ, մասնաւորապէս՝ ուսուցման լեզուի ընտրութեան, առարկայական ծրագրերու մշակման, դասագիրքերու հրատարակման, ուսուցիչներու պատրաստման, միջին մասնագիտական և բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ ընդունելութեան կարգերի վերաբերեալ:

Հանդիպման ընթացքին քննարկուած են երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող շարք մը հարցեր:

## ԱՅՍ ՏԱՐՈՒՄՅ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՏԵԱԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԵՐԿՆԻՇ ԱՃ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԾ Ե

Յայաստանի մէջ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2024 թուականի Յունուար-Մարտ ամիսներուն 14,3 տոկոսով բարձր եղած է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի տուեալէն: Այդ մասին նշուած է ՀՀ Վիճակագրական կոմիտեի ներկայացուցած՝ երկրի ընկերատնտեսական վիճակը բնութագրող մաքրոտնտեսական ցուցանիշերու հերթական ամփոփագրին մէջ:



Ընդ որում, այս տարուայ Մարտի նշուած ցուցանիշը Փետրուարի համեմատ աճած է 10,4, իսկ 2023-ի Մարտ ամսուան համեմատ՝ 15,3 տոկոսով:

Այս տարուայ առաջին եռամսեակին Յայաստանէն արտահանումը 2,7 անգամ գերազանցած է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ցուցանիշը՝ կազմելով 4 միլիարդ 422,8 միլիոն տոլար: Այս տարուայ Մարտին, Փետրուարի համեմատ, աճը կազմած է 13,1 տոկոս, իսկ 2023-ի Մարտի համեմատ աւելցած է 3 անգամ՝ կազմելով 1 միլիարդ 845,4 միլիոն տոլար:

Փետրուարի համեմատ Մարտին առեւտրաշրջանառութիւնը աճած է 7,3 տոկոսով: 2024-ի Մարտին, նախորդ տարուայ նոյն ամսուայ համեմատ, աւելցած է 2,1 անգամ՝ կազմելով 3 միլիարդ 568,2 միլիոն տոլար:

Տարուայ առաջին եռամսեակին Յայաստանէն արտահանումը 2,7 անգամ գերազանցած է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ցուցանիշը՝ կազմելով 4 միլիարդ 422,8 միլիոն տոլար: Այս տարուայ Մարտին, Փետրուարի համեմատ, աճը կազմած է 13,1 տոկոս, իսկ 2023-ի Մարտի համեմատ աւելցած է 3 անգամ՝ կազմելով 1 միլիարդ 845,4 միլիոն տոլար:

2023 թուականին Յայաստանի մէջ բնակչութեան մէկ շունչի հաշուարկով համախառն ներքին արդիւնքը կազմած է 8170 ԱՄՆ տոլար: 2022 թուականին ՀՆԱ-ն՝ մէկ շունչի հաշուով կազմած է 6661 տոլար:

## ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ (CRITICAL THINKING) ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ

Կասկած վեր է, որ ընկերութեան մը, ազգի մը կամ որեւէ խմբաւորումի ողնայարը կը հանդիսանայ երիտասարդ տարրը, որ իբրեւ քաղաքապետ մղում կու տայ շարժումներու կամ պատճառ կը դառնայ ընկերային անդա-



մալուծութեան: Եթէ ընկերութիւն մը առողջ է, անպայման որ ունի երիտասարդութիւն մը, որ զայն կ'առաջնորդէ դեպի առաջ՝ յառաջդիմութեան, ընկերային դրական փոփոխութիւններու, քաղաքակրթութեան և գաղափարախօսական նուաճումներու ուղղութեամբ:

Երբ ընկերութիւն մը կը պարզէ հիւանդագին վիճակ մը, եական պատճառներն մէկը պետք է փնտռել երիտասարդութեան դրսեւորած հոգեւտարու իրականութեան մէջ: Զմոռնանք որ երիտասարդութիւնը ինքնըստինքեան գոյութիւն չէ, նոյնիսկ եթէ բնախօսական տուեալները այդ մէկը կ'ենթադրեն: Երիտասարդութիւնը նաեւ դաստիարակութիւն է, ժամանակակից է: Երիտասարդութեան ըմբոստ, առկայ պայմանները մերժելու, միշտ փոփոխութիւններու հակամետ նկարագիրը կրնայ ճիշդ հակառակ արդիւնքը տալ եթէ չունի ճիշդ, չզատահարակոյի:

Պահպանողական, իշխանատենչ և շահամետ դեկավարութիւնները, պետական թէ կուսակցութիւններու մակարդակին վրայ, դժմ են դաստիարակուած և տեսլապաշտ երիտասարդութեան, որովհետեւ նման երիտասարդութեան մը գոյութիւնը ենթադրու կը պատրաստէ փոփոխութիւններու, յառաջդիմութեան, հաշուետուական համակարգի յառաջացման և յեղաշրջումներու, որոնք բնականօրէն կը հակադրուին իշխանամոլական խաւարմութեան և անաւարտական մաֆիականութեան:

Իսկ ի՞նչ վիճակ կը պարզէ հայ երիտասարդութիւնը պահպանողականութիւն-փոփոխութիւն յարաբերութեան մէջ: Բնականօրէն, հայ երիտասարդը եւս ենթակայ է իր միջավայրի ազդեցութեան, որ իր անմիջական դրոշմը կը դնէ անոր առօրեային կրօն: Քաղաքական կամ ընկերային հողովոյթներու հետ բնականօրէն փոխուած է հայ երիտասարդութեան դիմագիծը: Այսպէ՛ս է, կը փոխուի:

Յայաստանի վերանկախացումէն ետք, Յայաստանի Լորաստեղծ պահպանողական խաւի իշխանատենչ խաղերը եկան կլանելու նաեւ հայ երիտասարդութիւնը, որ մեծ տոկոսով սկսաւ լողալ նոյն իշխանատենչութեան և նիւթապաշտութեան ճահիճին մէջ ու սկսաւ բռնել այլատերման ճամբան: Սփիւռքը շատոնց միաճուած էր այդ տիրոջ մէջ:

Այս հոսանքին առընթեր, նշմարելի է նաեւ գոյութիւնը այլ հոսանքի մը, որ կը պահոււնդի գաղափարին ետեւ, իր արարքները կ'արդարացնէ գաղափարով, բայց այս կերպից ետեւ հիմնականօրէն առկայ է անձնաշխատութիւնը՝ իր անաւարտական ու մաֆիական ստորոգելիներով: Այս հոսանքը նոյնքան այլատերող է ապաքաղաքականացնող իրավիճակ մը ստեղծած է, որովհետեւ կ'արտադրէ տիպարներ, որոնք գաղափարականութիւնը աղարտելու կողքին, կը վարակեն ժխտականութիւն և վանողականութիւն:

Այս բոլորին մէջ կայ սակայն գաղափարական առողջ երիտասարդութիւն մը, որ կը պայքարի պահելու համար իր առիւտական դիմագիծը: Այս երիտասարդները, սակայն, ներկայ իրավիճակին մէջ կը ներկայացնեն փոքրամասնութիւն մը և իրապաշտ ըլլալու համար, առայժմ չունին քաղաքական, ընկերային և տնտեսական մեր կեանքը բարեփոխելու տուեալներ, որովհետեւ դժ-յանդիման կը գտնուին անպատասխան հարցադրումներու: Ինչպէ՛ս կենսաւորել տեսլապաշտութիւնը իշխանատենչական անբարոյութեան այս մթնոլորտին մէջ: Տեսլապաշտութիւնը վերածել միջոցի թէ նպատակի: Եթէ միջոց է, ինչպէ՛ս պայքարիլ հակառակ հոսանքի ահարկու գէնքերուն դիմաց:

Այս հարցումները հայ երիտասարդութիւնը դժ-յանդիման կը դնեն իրամայականի մը՝ մտածողութեան եղանակի մը, բնական մտածողութեան գարգացման, որ ունի գիտական, վերլուծական և հետաքննական հիմք ու լաւագոյն կը պատշաճի ներազգային և միջազգային իրավիճակներուն, մասնաւորաբար համացանցի և ընկերային ցանցերու անհակակշիռ գարգացման մթնոլորտին մէջ: Պետք է փոխել մեր մտածելու ձևերը, ոչ թէ խորքը: Մեր մտածելաձևերը պետք է յարմարի 21-րդ դարու արհեստագիտական արագընթաց նուաճումներու հողովոյթին, ինչու չէ տեսնելու, տուեալներ հաւաքելու, վերլուծելու և եզրակացնելու համակարգային եղանակին: Վերջ ի վերջոյ, պայքարը, շարժումը գիտութիւններն են, իրենց քաղաքական, տնտեսական և գիտական բազմաթիւ երեսներով:

Գաղափարական մեր ժամանակակիցները, մեր արմատներէն եկած աւիշը մեզի կրնան շնորհել հաւատք, սակայն չեն կրնար մեզի տրամադրել գործի և պայքարի գիտական միջոցները: Պետք է յամառօրէն կառնչել մեր մշակութային ժամանակակիցները և անշեղօրէն պահել մեր ազգային անկեղծութիւնները, սակայն աստիճան դուրս չենք կրնար չտեսնել իրամայականը՝ մտածելու նոր եղանակի մը,

ՎԱՐՈՒՇ ԹԵՆԴԵԼԵԱՆ

(Շար.ը տեսնել 4րդ էջ)



ԱՐՑԱԿԱՆԵԱՆ ԶՈՒՇԵՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԷՆ Լ.Ղ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ ԱՊԱ ԴԱՐՁԵԱԼ ԳԵՐԵԻԱՐՈՒՄԵ ԵՒ ՀԱՅՄԱՐԿՈՒՄԸ ԱՋԱՏԱՏԵՆՉ ԼԵՌՆԱԵՆԻԱՐԿ

1977-2023

Կարծես թե անհատալի երագ էր, երբ 1977-ի Օգոստոս 8-ին, Երեւանի պետական համալսարանի ուսանող, ընդառաջելով Զաթերը գիւղի ականաւոր դէմքերէն Տիգրան Օհանեսանի, ճամբայ ինկայ դէպի «արգիլուած հայրենիք», այն ժամանակ խորհրդային Ատրպէյճանի ինքնավար մարզ՝ Լեռնային Ղարաբաղ: Երեւանի աստուկայանէն վարձելով «փափախճի» Աշոտ ամենակնաց «Մոսկվիչ» ինքնաշարժը, 10 ժամուան դժուարին ճանապարհորդութենէ ետք, Սեւանի ափերով հասանք Սարսանկի նորկառոյց լիճ ամբարտակի կողքին գտնուող Զաթերը գիւղը:



Ստեփանակերտ 1993

Մեր կեցութեան քանի մը օրուան ընթացքին ականատես եղանք Զեյտար Ալիեւի կեղծ համայնավարական լուրնգներու քարոզչութեան ամերիչ երեւոյթներու: Ամէն տեղ հայկական գերեզմաններու կողոպուտ, աճիւններու դուրս շարտում, հայկական գիւղերու կղզիացում արուեստական եւ անմարդկային միջոցներով: Առեւանգումներ, սպանութիւններ ամենուրեք եւ հայ ազգաբնակչութեան հետզհետէ համբերութեան բաժակի յորդումը, այն ժամանակ իսկ գաղտնի կազմակերպութիւններու եւ շարժումներու ծնունդով, որոնցմէ էր «Սողոմոն Թեխիլեան» կազմակերպութիւնը: Մէկ խօսքով, յեղափոխութիւնը արդէն իսկ կը բողկտար, որ հետագային պիտի վերածուէր համազգային ցոյցերու եւ անկախութեան հռչակման:

Երեւանէ վերադարձիս, թուրքին յանձնեցի տպաւորութիւններս եւ որպէս յօդուած ուղարկեցի Պէյրութ, որ լոյս տեսաւ Ռ.Ա.Կ. «Զարթօնք»-ին մէջ, որմէ արտատպեցին սփիւռքահայ բազմաթիւ թերթեր, ինչպէս՝ Ֆրանսայի հանրածնօթ «Յայ պայքար»-ը:

Ազատամարտիկ նահատակ Սուրբ Մելքոնեան հետագային խոստովանած է, թէ ինք առաջին անգամ Ղարաբաղ Արցախի մասին կարդացած է իմացած է այդ պատմական յօդուածէն, որ սակայն պատճառ դարձաւ Խորհրդային Զայաստանի մէջ ձեռքարկուելու եւ հեռացուելու Երեւանի պետական համալսարանի պատմութեան բաժանմունքէն եւ հանրապետութենէ...:

1993-ին, նոր դուրս եկած Սուրիոյ «Մեզզէ» ռազմա-քաղաքի կալանավայրէ, Երեւանի պետական համալսարանի ականաւոր դասախօսներու Պետրոս Յովհաննէսեանի ու Լեւոնուր Խուրշուդեանի ազդու միջամտութեամբ վերադարձայ համալսարան, ուր եւ անարտեցի ուսումս 1996-ին, նաեւ միջազգային լրագրութեան բաժինէ: Անշուշտ առաջին գործն եղաւ այցելել Արցախ, նորանկախ Լ.Ղ. Զանրապետութեան, որ ծնունդ առած էր 1991-92 թուականներուն: Ծանօթացայ ազատամարտիկ, տակաւին պատանի Տարոն Յակոբեանին հետ (որին Լ.Ղ. Զանրապետութեան Գերագոյն խորհուրդի քարտուղար, Արցախի դրօշը Սաֆանովի նախկին կառավարական շէնքին վրայ պարզողներէն, նահատակ Կատիկ Յակոբեանին):

Շուտով, 11-ժամեայ յոգնեցուցիչ ճամբորդութենէ ետք, Երեւան-Գորիս-Շուշի-Ստեփանակերտ ուղիով, գիշերուան ժամը 12-ին, հասանք մայրաքաղաքի Կերամնուրդի հրապարակ: Ամէն տեղ լուսաւոր էր, շնորհիւ Սարսանկի ամբարտակի ելեկտրակայանէն մինչ քաղաքամայր Երեւան օրուան եւ գիշերուան մեծ մասը կ'անցնէր մթութեան մէջ...:

Չիս շերտօրէն ընդունելով իր համեստ «վարձով» բնակարանին մէջ, արցախեան շարժման ականաւոր դէմքերէն մէկը, Վլատիկ Յակոբեան, նաեւ պատմաբան ու գիրքերու հեղինակ, մինչեւ առաւօտեան ժամերը, իր որդոյն հետ գրուցեց արցախեան, հայաստանեան եւ սփիւռքեան հարցերու մասին: Զարիւրամեակներէ ի վեր առաջին անգամ, հայ ժողովուրդը կարողացաւ բռնագրաւել հողեր ազատագրել, հիմնելով երկրորդ հանրապետութիւն, հակառակ ներքին եւ արտաքին դաւադիրներու սաղորաքներուն, յայտնեց մեծ հայրենասերն ու առասպելական պետական գործիչը:

Առաւօտեան եղանք Լ.Ղ. Զանրապետութեան նախագահի պաշտօնակատար, Գերագի Պետրոսեանին մօտ, իր կառավարական գրասենեակին մէջ: 1976-77 թուականներու Պատմութեան բաժանմունքի դասընկերս՝ Արթիւր Մկրտչեան, նորանկախ հանրապետութեան առաջին նախագահը «մութ պայմաններու» մէջ նահատակուած էր մերժելով Ատրպէյճանի ղեկավար Սուրապիպովի եւ իր հայ դասաւան գործակիցներու պահանջները...:


Այցելելով մեծ նահատակ Արթիւր Մկրտչեանի շիրիմին, Զայրենական Մեծ պատերազմի հերոսներու պանթէոնէն մէջ, շրջելով Ստեփանակերտի ու Շուշիի մէջ, հանդիպեցանք նաեւ Չոյա Օհանեսանի, այժմ դատախազուի, որ Զաթերըն էր քրոջ հետ տեղափոխուած էր Ստեփանակերտ, աշխատելով պետական կառոյցներու մէջ:

Ամուռանալի էր մեր առաջին եւ ապագային տասնեակ մը հանդիպումները Արցախի հոգեւոր Առաջնորդ, խիզախ եւ անվախ Պարգեւ Արք. Մարտիրոսեանին հետ, Շուշիի իր բնակարանին մէջ: Զետագային, իր ջանքերով պիտի վերականգնուէր Շուշիի իր բնակարանին դէմը գտնուող Արքոց Ղազանչեցոց եկեղեցին: Իշխամ Ալիեւի հրամանով, հոգեկան խանգարումներով եւ ստորակայութեան զգացումով տառապող այդ ճիւղը պիտի ռմբակոծէր Շուշիի Մարտիրոս Արքեպոս 2020-ին, «բախի տեղ չընելով» Ռուսիոյ ղեկավար Վլատիմիր Փուլինի եւ Սերկէյ Լաւրովի յորդորները՝ չընաղելու հայկական պատմական սրբատեղիները, որ իբր թէ Քրեմլինի պաշտպանութեան տակ առնուած էին...:

1998-ի Սեպտեմբեր 2-4 ժամանակաշրջանին, Արցախ աշխարհ պայրեցան փառաւոր օրեր: Մայր Զայրենիքէն լրագրողներու մեծ պատուիրակութիւն մը ճամբայ ինկանք հանրակառքով դէպի ազատատենչ Ստեփանակերտ: Զոն էին արդէն ոչ միայն Զայաստանի Ազգային ժողովի պատգամաւորներ, նաեւ հայ ժողովուրդի փառապան ռուս գաւակներ՝ Չորավար Ալեքսանտր Լեպեր, որ իր որոտընդոտ ձայնով յայտարարեց ի լուր աշխարհին, թէ Լեռնային Ղարաբաղը երբեք Ատրպէյճանի մաս չէ կազմած, այլեւ՝ Խ. Միութեան... Փառաւոր ելոյթ ունեցաւ Ռուսիոյ պետական Տումայի փոխնախագահ, Արցախի մեծ բարեկամ Կոնստանթին Չարոյին: Վերածնունդի հրապարակին վրայ գտնուող պատուանդանի վրայ կանգնած էին հայ ժողովուրդի միաբանուած հերոս ղեկավարները, գլխաւորութեամբ նահատակ սպարապետ Վազգէն Սարգսեանի, նախագահ Ռուպերթ Զոչարեանի, պաշտպանութեան նախարարներ Սամուէլ Պապայեանի եւ Սերժ Սարգսեանի:



Չորավար Ալեքսանտր Լեպեր



Սպարապետ Վազգէն Սարգսեան

Զետաքրքրական դրուակներ պատահեցան, երբ Չուիցերիոյ Արտաքին գործերու նախարարութեան նախաձեռնութեամբ հայրենասեր գործիչ Վիգէն Չթըրեան կազմակերպեց Ատրպէյճանի մամուլի եւ զանգուածային լրատութեան ականաւոր դէմքերու այցը Արցախ: Նախապէս Պաքուի մէջ, Զեյտար Ալիեւ կազմակերպած էր հանդիպում-խորհրդածողով Զայաստանի-Արցախի, Վրաստանի եւ Ատրպէյճանի լրագրողներու մասնակցութեամբ երեք լեզուով «Բարեւ ձեզ, քամար ճորպա, հոշ կելտիհիզ»-ով ողջունելով պատուիրակութիւնները իր պալատին մէջ: Այդ օրերուն, իր հեռատեսիլային եւ տեսերիզային ելոյթներով, Զեյտար Ալիեւ արդէն կը յորդորէր Ատրպէյճանի ժողովուրդը, որ Լեռնային Ղարաբաղը արդէն երկրին կազմին մէջ չէր այլեւս: Ըստ Զ.Զ. վաղամեծիկ դէսպան, հմուտ դիւանագետ Զամլէտ Գասպարեանի, եթէ Զեյտար Ալիեւ թիչ մըն ալ երկար ապրէր, Արցախի հարցը լուծուած կ'ըլլար ի նպաստ հայերու:

Վերադառնալով Ատրպէյճանի լրագրողներու պատուիրակութեան Արցախ այցելութեան, անվտանգութեան պայմաններէ մեկնելով Երեւանի օդակայանէն ուղղաթիռով փոխադրուեցանք Խոնավուի օդակայանը: Պաքուէն ժամանած էին այլ ազգութիւններու պատկանող հեղինակաւոր մամուլ գործիչներ: Զանի մը օր շարունակ, ազերի հիւրերը պտտեցան ինչպէս Ստեփանակերտի, այնպէս ալ Շուշիի մէջ, Արցախի հող վերցնելով եւ ստանալով պատասխան, թէ հողին համար բաժնեկիցներ չեն ըլլար...: Էլտիկար Ալիեւ, Օլէկ Եսայեանի ներկայութեամբ ճաշկերտի ընթացքին հայկական մենապար իսկ կատարեց, երեւան թոչեւէ առաջ, պատուիրակները այցելեցին Գանձասարի վանք, խորովածով հիւրասիրուելով ազնիւ արցախցիներու կողմէ եւ հրաժեշտի խօսքերէ ետք վերադարձան քաղաքամայր Երեւան:

Դժբախտաբար, միշտ չէր միաբան էին ազատ Արցախի ղեկավարները: Սակայն վստահ ենք որ հայ ժողովուրդը, ինչպէս միշտ, իր մէջ ոյժ եւ կորով պիտի գտնէ ազատագրելու դարձեալ Արցախը, ինչպէս Դաւիթ Բեկի, Խորալէ Օրիի, Յովսէփ Էմիլի եւ այլ պատմական նուիրեալներու օրինակով:

ՀԱՍՏ ՍՈՍԿՈՅԵՆ

«ՄԱՅՄԱՆԱԶԱՏՈՒՄ ԿԱՍ ՊԱՏԵՐԱԶՍ»

(Շարունակուած Ա. Էջէն)

գաղափարին հետ: Անոր համար համաձայնեցուած բոլոր սկզբունքները պէտք է արձանագրել խաղաղութեան պայմանագրին մէջ», ըսաւ Փաշինեան: Ան վստահեցուց, թէ տարի մը ետք Զայաստանի 29 հազար 743 քառակուսի քիլոմէթր տարածքը պիտի չփոխուի, որովհետեւ հիմնուած պիտի ըլլայ օրինականութեան վրայ:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ-ԵՎԵՂԵՑԻ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Սահմանազատումի հոլովոյթին եւ Բագրատ Արքազակին առաջնորդած ժողովրդային շարժումին լոյսին տակ, իշխանութիւն-եկեղեցի լարուածութիւնը կը հասնի վտանգաւոր աննախադէպ աստիճանի՝ փոխադարձ ամբաստանութիւններով եւ սուր քննադատութեամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան երէկ տուած մամուլ առույթի ընթացքին Ամենայն Զայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը անձամբ ամբաստանեց ընդդիմադիր քաղաքական շարժում գլխաւորելու մէջ: «Ինչո՞ւ Կաթողիկոսը պիտի առաջնորդէ քաղաքական շարժում: Շարժումին խօսնակը յայտարարեց, թէ նպատակն է վերականգնել նախորդ իշխանութիւնը», ըսաւ Փաշինեան եւ յիշեցուց, թէ 2021-ի ընտրութիւններէն ետք նախկին նախագահ Ռուպերթ Զոչարեան բացատրած էր, թէ ինչպէս պէտք է եկեղեցւոյ միջոցաւ իրականացնել իշխանափոխութիւն: Դիտել տալով, որ հոգեւորական մը չի կրնար քաղաքական խօսք արտասանել առանց Ամենայն Զայոց Կաթողիկոսի արտօնութեան կամ յանձնարարականին, Փաշինեան եզրակացուց, որ «Կաթողիկոսը այս հոլովոյթին առաջնորդն է, իսկ շահառուն՝ ընդդիմադիր Զայաստան դաշինքի ղեկավար Ռուպերթ Զոչարեանը»: Փաշինեան յայտնեց նաեւ, որ հայ առաքելական եկեղեցւոյ բարձրագոյն ղեկավարութիւնը ձայնողած է իր հոգեւոր առաջնորդութեան մէջ, ուստի կը փորձէ դիմել քաղաքականութեան: Ան յստակացուց, թէ իշխանութիւնը եկեղեցւոյ հետ հակամարտութեան մէջ չէ, լրագրողներուն կոչ ուղղելով եկեղեցւոյ հարցնել, եթէ հակամարտութեան մէջ են իշխանութեան հետ:

Վարչապետ Փաշինեանի մամուլ առույթին ընթացքին ինչպէս քննադատութիւններուն հակադարձեց Զոչարեւր գերագոյն խորհուրդը: «Խիստ վտանգաւոր կը համարենք առանց համապարփակ ու երաշխաւորուած լուծումներու Տաւուշի սահմանամերձ շրջանին մէջ սահմանազատումի եւ սահմանագծումի անունին տակ իրականացուող գործողութիւնները, որոնք սպառնալիքներ կը յառաջանեն մեր ժողովուրդին համար», նշուեցաւ Էջմիածինէն հրապարակուած յայտարարութեան մէջ, անցնելով, որ եկեղեցականները չեն կրնար անտարբեր եւ անհաղորդ մնալ ժողովուրդի կարիքներուն եւ անհանգստութիւններուն, այլ կոչ կ'ուղղեն արդար մտաւոքութիւններուն մասին արտայայտել միայն խաղաղ միջոցներով, հանդարտօրէն եւ զգալուած՝ գերծ մնալով ապօրինութիւններէն:



Իսկ Բագրատ Արք. Գալստեանեան յայտնեց, թէ իշխող կուսակցութեան բարձրաստիճան շրջանակներէն ազգայնէր կը ստանայ իր գլխաւորած շարժումին մասնակցելու մասին: Ան իր շարժումին հակառակող կողմը որակեց չարի եւ պառակտումի ուժ: «Ճշմարտութիւնը պէտք է յաղթէ: Անոնք պէտք է սուսի համար պատասխան տան: Եկաւ քան մը ըսաւ, երկու օր ետք սկսան սահմանազատումի երկրաչափական աշխատանքները, ուստի մենք պէտք է լուծենք հոլովոյթը կանգնեցնելու հարցը», ըսաւ Արքազակը, սուտ համարելով վարչապետին 2021-ի յայտարարութիւնները: Յիշեցնելով, որ Փաշինեան պատրաստակամութիւն յայտնած էր ձեռքը կտրել, եթէ Տաւուշէն գիւղ յանձնուի, Արքազակը վարչապետին կոչ ուղղեց գործադրել իր խոստումը: Անոր համաձայն, իշխանութիւնը կը սարսափի Տաւուշէն կսպած այս շարժումէն:

Արցախի թեմը իր կարգին յայտարարեց իշխանութեան դէմ ծաւալած շարժումին միանալու մասին, «ետ շրջելու համար վատընթաց ուղղուող այս անիւր, որպէսզի Մայր Զայրենիքը չունենայ Արցախի փորձառութիւնը»:



Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը իր կարգին կապ հաստատեց Գարեգին Բ. Ամենայն Զայոց Կաթողիկոսին հետ եւ իր ամբողջական աջակցութիւնը յայտնեց Գերագոյն հոգեւոր խորհուրդի հրապարակած յայտարարութեան: Վեհափառ Զայրապետները միտքեր փոխանակեցին նաեւ Զայաստանի դիմագրուած տագնապներուն՝ ներառեալ Տաւուշի խնդիրն շուրջ:



# ՌԱՅԱԿԸ ԶԻՆԱԿԱԿԱՐԵՆ ԱՌԱՋ

(Շարունակում Ա. Էջին)

ապաստանած անլի քան մեկ միլիոն պաղեստինցիներ կրկան ենթարկուիլ աղետի: «Միջազգային ընտանիքը պետք է անյապարհ շարժի՝ կանխելու համար խրախուսելու շարունակական ոտնձգությունները եւ միջազգային օրենքի բիրտ խախտումը՝ յանգելով զինադադարի», նշեց Լախարարությունը:

## ԲԱՆԱԿՅԱՅԻՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՆ

Եգիպտական լրատվամիջոցներ երկ հաղորդեցին, թե Գահիրեի մեջ խորհրդակցությունները կը շարունակուին, մասնակցութեամբ Զաթարն, Յամասն եւ Միացեալ Նա-



հանգներն ներկայացուցիչներու՝ քննարկելու Կազայի զինադադարին թղթածրարը: Այս հարցը արծարծելու համար երկ Գահիրե վերադարձաւ ամերիկեան CIA-ի տնօրէն Ռիչիամ Պրոնզը:

Յամասի ղեկավարներն Ուսամա Յամտան յայտարարեց, թե շարժումը ներկայացնող պատուիրակութիւն մը Գահիրե ուղղուած է՝ շարունակելու համար զինադադարի բանակցութիւնները: «Այս կ'ապացուցէ մեր դրական վերաբերմունքը եւ համագործակցութիւնը միջնորդներուն հետ՝ յանգելու համար զինադադարի», ըսաւ Յամտան, անլցնելով, թե «զնդակը այժմ կը գտնուի Նեթանիահուի եւ անոր ծայրայեղական կառավարութեան պարագլուխներուն մօտ»:

Իսրայէլի վարչապետը իր կարգին յայտնեց, թե զինադադարի առումով Յամասի առաջարկները հեռու են իսրայէլեան տարրական պահանջներէ: «Յամասի առաջարկները կը նպատակադրեն կանխել մեր ուժերուն Ռաֆահ մուտքը», ըսաւ Նեթանիահու, շեշտելով, որ Ռաֆահի գործողութիւնը պիտի շարունակուի՝ որպէս Յամասին վրայ ճնշելու միջոց:

## ԱՍԵՆՈՒԹԻՆԸ ՊԻՏԻ ԿԱՆՈՒԹ

Պաղեստինի նախագահութեան բանքեր Նապիլ Ապու Ռուտայնա ամերիկեան վարչակազմին կողմէ ուղղեց կանխել Ռաֆահի դէմ իսրայէլեան լայնածաւալ յարձակումը, ինչպէս յայտնեց ապաստանած հարիւր հազարաւոր տե-



ղահանուածներուն կեանքը: Իսկ Միացեալ Նահանգներու սպիտակ տունը յայտարարութեամբ մը յոյս յայտնեց, որ Իսրայէլն ու Յամաս շարժումը լուծեն բանակցային մնացեալ խնդիրները եւ յանգին զինադադարի համաձայնութեան: «Իսրայէլ տեղեկացուց, թե Ռաֆահի մէջ ընթացք առած գործողութիւնը սահմանափակ է», յայտարարեց ամերիկեան ազգային անվտանգութեան խորհուրդի բանքեր ճոն Զիրպի, խոստանալով աջակցիլ զինադադարի ջանքերուն:

Նախագահ Ճօ Պայտըն իր կարգին վերահաստատեց Ուաշինկթընի շարունակական աջակցութիւնը Իսրայէլին, թէեւ կան որոշ տարակարծութիւններ: «Ամերիկացիներ-



րուն կողմէ կ'ուղղեմ միանալ ցեղային ատելութեան երեւոյթին դէմ», ըսաւ Պայտըն: Անոր խօսքով, ամերիկեան վարչակազմը կը շարունակէ աշխատիլ Կազայի մէջ գերեզմարաններուն ազատ արձակումը ապահովելու ուղղութեամբ: «Միացեալ Նահանգներու հրեաներուն կ'ըսեմ, որ դուք առանձին չեք ու ես կը զգամ ձեր մտավախութիւնները», ըսաւ նախագահը: Ան շեշտեց, թե խօսքի ազատութիւնը կարեւոր է, սակայն կարելի չէ արտօսել, որ համալսարաններուն մէջ շարունակուի ատելութիւնը հրեաներուն կամ որեւէ կողմի նկատմամբ:

## ԻՐԱՆԵՆ ԴՅԳՈՐՈՒԹԻՆ

Յիւլեական ուժանիւթի միջազգային գործակալութեան ընդհանուր տնօրէն Ռաֆայէլ Կրոսի յայտարարեց, թե իրենց երբեք գոհ չեն իրանի հիւլեական թղթածրարի զարգացումներով: Ան կողմէ ուղղեց թեհրանի հիւլեական ծրագրի խնդիրներու լուծումին առումով անյապարհ հասնիլ 2024-ի տարիներին:

# ԱՄԵՐՉԱԿԱՆ

## ՉԵՏՓԻՆԸ ԼԻԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ ԵՐՔ ՊՈՐՈՒՄԻԱ ԶԱՐԹԱԿԱՆ

Երոպայի ֆութպոլի ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Չեմփիընզ Լիկի կիսամարտական հանգրուանի երթի առաջին մրցումին, Գերմանիոյ ախոյեան «Պայըրն Միւնխի»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ Սպանիոյ ախոյեան «Ռեալ Մատրիտ»-ի դէմ: «Պայըրն Միւնխի» ուներ որոշ առաւելութիւն, սակայն «Ռեալ Մատրիտ» պայքարող կազմն էր: Մրցումի 24-րդ վայրկեանին, պրագիլցի յարձակող Վինիսիուս ժուլիոր» յառաջ տարաւ «Ռեալ»-ը, գերմանացի կիսապաշտպան Քրաուսի փոխանցումով: Այս, յարձակող Սանե՝ 53-րդ եւ անվիացի յարձակող Էյն տուգանայինով՝ 57-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-1, ի նպաստ «Պայըրն»-ի, աստիճան կիսապաշտպան Լայմըրի փոխանցումով: Սակայն, 83-րդ վայրկեանին, Վինիսիուս ժուլիոր օգտուեցաւ «Պայըրն»-ի ըրեացի պաշտպան Մին-Ճայ Զիմի սխալէն ու տուգանային հարձակող հաշիւը դարձուց 2-2: Մրցումը ավարտեցաւ հաւասարութեամբ ու դարձի մրցումին «Ռեալ Մատրիտ» պիտի ունենայ դաշտի առաւելութիւն: Երկրորդ մրցումին, Գերմանիոյ «Պորուսիա Տորթմունտ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ Ֆրանսայի ախոյեան «Փարի ՍԷՆ Շերմէն»-ի դէմ: Զուսասարակչուած մրցումի 36-րդ վայրկեանին, յարձակող Ֆուլքրիկ նշանակեց «Պորուսիա»-ի կողմ, պաշտպան Շլոթըրպէի փոխանցումէն օգտուելով: «Պորուսիա» յաղթանակ տարաւ միակ կողով, սակայն «Փարի ՍԷՆ Շերմէն»-ի նման յառաջապահ օղակ ունեցող խումբի մը դէմ դարձի մրցումը պիտի ըլլայ դժուար: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պայըրն Միւնխի (Գեր.) - Ռեալ Մատրիտ (Սպ.) 2-2
- Պորուսիա Տորթմունտ (Գեր.) - Փարի ՍԷՆ Շերմէն (Ֆր.) 1-0:

## ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ

(Շարունակում Բ. Էջին)

քննական մտածողութեան զարգացման: Մեր հաւաքական կեանքին մէջ արձանագրուած թերութիւնները չենք կրնար սրբագրել ինքնանպատակ քննադատութիւններով կամ ճանաչողով, բայց մանաւանդ... բամբասանքներով ու հայիոյանքներով:

Ամբողջ մարդկութիւնը պահպանողական հոսանքին մէջ կ'անող արշաւին դիմաց, չենք կրնար չփնտռել ազդու գեներ, չենք կրնար չտեսնել մեր հաւաքական կեանքին փոտումը, չճանչնալ մեր թերութիւնները եւ ըստ այնմ չհակադէտ: Հակադէտը համար պետք է ունենալ քննական մտածողութեամբ շարժախուած առողջ միտք, որ ծնունդն է միջազգային եւ ներազգային իրավիճակներու առարկայական ծանօթութեան: Մեր դառն թաղելու եւ ընդհանրապէս Յայաստանի ու Արցախի դէմ լարուող դաւերուն դիմաց, չենք կրնար մեր վճռականութիւնը չստանալ մեր երիտասարդութենէն, գիտակից երիտասարդութենէն:

Պայքարը անցեալապաշտութիւն չէ, գիտութիւն է: Այս օրերուն գիտակցութիւնը սերտօրէն կ'առնչուի գիտութեան: Զուստը միշտ դերակատար է, բայց առանց գիտութեան անբաւարար: Գիտութիւնը պետք է շփոթել ուսման հետ: Այս պարագային, գիտութիւնը ծանօթութիւն է, առարկայական ծանօթութիւն է շրջապատի պայմաններուն, խաղին օրէնքներուն: Գիտութիւնը ապագան գնահատող տեսիլք է, ցնորատեսութիւն չէ: Գիտութիւնը ծրագրում է:

Կ'արժէ լրջօրէն մտածել այս մասին: Տարակուսանքը է հարցարդումները կը նկատուին սկիզբը քննական մտածողութեան: Պայման է որ տարակուսիք մեր ներկայ իրավիճակով եւ հարցարդումներ կատարեց մեր ապագային նկատմամբ:

Մամանակն է որ մեր կարգաքաջներն ու լսածները չսեփականացնենք հալած իւրի պէս... տարակուսիք եւ հարցադրենք... որովհետեւ ճշմարտութիւնը կրնայ այլ տեղ ըլլալ:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՍԿՍԻ ՆԱԿԱՊԱՏՐԱՍՏՈՒԼ...

(Շարունակում Բ. Էջին)

Լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին յայտնեց ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեանը:

«Առաջին դէպքն է, որ Ողիմպիական խաղերու մարզաձեւ երկրորդ մարզաձեւէն մենք պիտի հիւրընկալենք աշխարհի ախոյեանութիւնը: Այդ իրաւունքը շնորհուած է Հայաստանի Հանրապետութեան՝ Ծանրամարտի միջազգային ֆետերասիոնի գոնկրէսի ժամանակ: Մենք պատմութիւն ունինք նմանատիպ մեծ իրադարձութիւններու կայացման՝ բռնցքամարտի Երոպայի ախոյեանութիւնը, ծանրամարտի Երոպայի ախոյեանութիւնը, սամպոյի աշխարհի ախոյեանութիւնը: Օրեր առաջ Հայաստանի մէջ աստիճանաբար ֆութսալի Չեմփիընզ լիկի եզրափակիչ փուլերը: Մենք կ'ուզենք շարունակել այս աւանդույթը, որ լուրջ ազդեցութիւն ունի մեր մարզական ու տնտեսութեան ոլորտներու զարգացման վրայ», - ըսաւ ան:

Յարութիւնեան վերջից 2023 թուականի ծանրամարտի Երոպայի ախոյեանութեան մէջ Հայաստանի տղամարդոց խումբի բոլոր քաշային կարգերուն մէջ նուաճած 10 մետալները՝ յոյս յայտնելով, որ նմանատիպ երեւոյթները շարունակական պիտի ըլլան:

«Մենք հիմա արդէն կը սկսինք նախապատրաստուիլ 2027 թուականի ծանրամարտի աշխարհի ախոյեանութեան: Մեր գործընկերներուն առաջարկած ենք առնուազն 2023 թուականի Երոպայի երեսնեան ախոյեանութեան կազմակերպում եւ անլին: Միջազգային ֆետերասիոնի հետ համագործակցութեան լաւ փորձ ունինք», - ըսաւ Յարութիւնեան:

Advertisement for 'AREK' dance troupe performance. Includes details about the troupe, the choreographer (Carlo Metrebian), and the performance schedule for May 31st, 1st, and 2nd, 2024. Venue: Doniguan Book Store - Mar Mikhael, Studio Vatche - New Hadjen, Salon Razzmig - Antelias, Libeirut Cell - Badawi street.

## ԼԻԲԱՆԱՆ ՍՆԱԿԱՅԱԾ ԶԷ

(Շարունակում Ա. Էջին)

### ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ՇԱՐԸ

Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը յայտարարեց, որ թմրեցուցիչներու վաճառակաւութեան դէմ պայքարի ծիրին մէջ կարելի եղած է ձեռքա-



կալել 1988-ին եւ 1989-ին ծնած երկու լիբանանցիներ, որոնցմէ մեկուն Նահի Էլ Մոթ շրջանին մէջ գտնուող բնակարանը կը գործածուէր թմրանիւթերու վաճառակաւութեամբ զբաղելու համար: Խուզարկումներուն ընթացքին բնակարանէն գտնուած է թմրանիւթ արտադրող եւ բաշթեալորող սարքեր: Սայտայի մէջ, ապահովութեան ուժերը ձեռքբերած են մարդու վաճառակաւութեամբ զբաղող եւ ոճրային ամբաստանութիւններով հետապնդուող 1971-ին ծնած լիբանանցի մը: Իսկ երկ Գիշեր ոչ պաշտօնական տեղեկութիւններ տարածուեցան անչափահասներու նկատմամբ սեռային ոտնձգութիւններ կատարած բջի-ջի 9րդ անդամին ձեռքբերակալութեան մասին եւ հաղորդուեցաւ, թե ան հայ է ու աշխատանքի բերումով լիբանանահայ համայնքին մէջ ունի գործուն ներկայութիւն:

### ԳԱՆԱՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿԻՆ

Իսկ լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, թե Զֆարշիմայի զօրամասին մէջ տեղի ունեցած է գանատական իշխանութիւններուն կողմէ լիբա-



նանեան բանակին տրամադրուած սարքաւորումներու պաշտօնական յանձնումի արարողութիւնը՝ ներկայութեամբ Լիբանանի մէջ Գանատայի դեսպանին, լիբանանեան բանակի հրամանատարի ներկայացուցիչին եւ շարք մը բարձրաստիճան սպաներու: Դեսպան Սթեֆանի Մքքալըմ շեշտած է լիբանանեան բանակին հետ տեւաբար համագործակցելու կարեւորութիւնը՝ ի տես Լիբանանի անվտանգութեան պահպանումին մէջ անոր գլխաւոր դերակատարութեան:

Advertisement for 'ARARAD DAILY NEWSPAPER'. Includes contact information: Managing Director: Ani Sarafian, Tel./Fax: 01-565599, P.O. Box: 175275 Mar Mikhael, Beirut | Lebanon | www.araraddaily.com, email: araradorastert@gmail.com. Also includes the newspaper's name in Arabic and its founding year (1976).